

Լոս Անջելես քաղաքի բնակարանային ապահովման մարմին



8-րդ բաժնի Սպասման ցուցակի վիճակահանություն



Բացվում է 2022 թ. հոկտեմբերի 17-ի առավոտյան ժամը 6-ին
Փակվում է 2022թ. հոկտեմբերի 30-ի երեկոյան ժամը 5-ին, խաղաղօվկիանոսային ժամային գոտիով

Դիմեք առցանց՝ միայն **HACLA.HCVLIST.ORG** կայքում

Լոս Անջելես քաղաքի բնակարանային ապահովման մարմինն անհատներից և ընտանիքներից ընդունում է առցանց դիմումներ՝ 8-րդ բաժնի ծրագրի սպասման ցուցակում ներառվելու վիճակահանությանը մասնակցելու համար: 8-րդ բաժնի ծրագիրը ընտանիքներին առաջարկում է բնակարանային նպաստներ՝ անշարժ գույքի սեփականատերերին վճարելով իրենց վարձավճարի մի մասը: Դիմելու հնարավորություն ունի ցանկացած ընտանիք կամ անհատ, ում եկամուտը չի գերազանցում սահմանված չափը: Ընտանիքի անդամներից մեկը պետք է լինի օրինական բնակիչ, նույնիսկ եթե նա անչափահաս երեխա է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **HACLA.ORG**:

Ընտանիքները և անհատները կարող են դիմել առցանց դիմումների ընդունման երկու շաբաթների ընթացքում, օրական 24 ժամ, շաբաթական յոթ օր՝ ինտերնետ հասանելիությամբ սմարթֆոնի, համակարգչի կամ այլ շարժական սարքի միջոցով: Դիմումները չեն կարող ընդունվել անձամբ, Էլ. փոստով կամ փոստով: Սմարթֆոն կամ ինտերնետ հասանելիությամբ համակարգիչ կամ այլ սարք չունեցող անձանց համար Լոս Անջելես քաղաքի լոկալ գրադարաններում առաջարկվում է համակարգիչների և ինտերնետ կապի անվճար հասանելիություն:

Վիճակահանությանը դիմելու համար Ձեզ անհրաժեշտ են հետևյալ տեղեկությունները՝ վավեր Էլ. հասցե, հեռախոսահամար, Ձեր բնակության հասցեն (եթե առկա է) և փոստային հասցեն, որոնց միջոցով Ձեզ հետ հնարավոր է կապ հաստատել, ընտանիքի ընդհանուր տարեկան եկամուտը, ինչպես նաև Տան տիրոջ և նրա կնոջ/ամուսնու/համատիրոջ (եթե կիրառելի է) անուն, ազգանունը, ծննդյան ամսաթիվը և Սոցիալական ապահովության համարը/Օտարերկրյա քաղաքացու գրանցման համարը (առկայության դեպքում):

Լրացուցիչ ռեսուրսներ, ինչպիսիք են, օրինակ, դիմելու համար օգնություն ցուցաբերող գործընկերները, Էլ. փոստի հաշվի ստեղծման դասընթացները և համակարգիչների ու ինտերնետի անվճար հասանելիությունը, կարող եք գտնել **HACLA.HCVLIST.ORG** կայքում: Եթե հաշմանդամության պատճառով դիմում լրացնելու կամ Էլ. փոստի հաշիվ ստեղծելու հետ կապված օգնության կարիք ունեք, կամ եթե Ձեզ հարկավոր են թարգմանչի ծառայություններ կամ հաղորդակցության այլ ձևաչափ, խնդրում ենք զանգել **213-523-SEC8** կամ **877-621-SEC8** հեռախոսահամարներով, խաղաղօվկիանոսային ժամային գոտիով առավոտյան 7-ից մինչև երեկոյան 6-ը, ամեն օր, դիմումների ընդունման ողջ ժամանակահատվածում: Լսողության կամ խոսելու հետ խնդիրներ ունեցող և TDD կամ TTY տեխնոլոգիայից օգտվող անհատները կարող են զանգել Կալիֆորնիայի կոմունացվող հաղորդագրությունների ծառայություն՝ հավաքելով **7-1-1** և ստանալ օգնություն:

Դիմումների ներկայացման ժամանակահատվածի ավարտից հետո տեղի է ունենում պատահական վիճակահանություն, որի միջոցով ընտրվում են 30 000 դիմումներ՝ «8-րդ բաժին» ծրագրի Սպասման ցուցակում ներառվելու համար: Դիմումները կարող են ներկայացվել ցանկացած պահի՝ դիմումների ընդունման երկշաբաթյա ժամանակահատվածի ողջ ընթացքում:

Վիճակահանության ժամանակ նախապատվություն կտրվի այն դիմորդներին, ովքեր բնակվում, աշխատում են կամ աշխատանքի են ընդունվել Լոս Անջելես քաղաքում, ինչպես նաև այն դիմորդներին, ովքեր (կամ որոնց ընտանիքի անդամները) հանդիսանում են ԱՄՆ զինված ուժերի վետերաններ և զորացրման ժամանակ իրավունքներից և արտոնություններից չեն զրկվել:

Մինչ 2022 թ. դեկտեմբերի 1-ը դիմորդները Էլ. փոստով կծանուցվեն վիճակահանությամբ ընտրված լինելու կամ չլինելու իրենց կարգավիճակի մասին: Դիմորդները կարող են ստուգել իրենց կարգավիճակը նաև **HACLA.HCVLIST.ORG** կայք այցելելու և/կամ **213-523-SEC8** հեռախոսահամարով զանգելու միջոցով:

Դիմելու և լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք այցելել **HACLA.HCVLIST.ORG**:





Լոս Անջելես քաղաքի բնակարանային ապահովման մարմին

8-րդ բաժնի Սպասման ցուցակի վիճակահանություն

Բացվում է 2022 թ. հոկտեմբերի 17-ի առավոտյան ժամը 6-ին
Փակվում է 2022թ. հոկտեմբերի 30-ի երեկոյան ժամը 5-ին, խաղաղօվկիանոսային ժամային գոտիով

Դիմեք առցանց՝ միայն **HACLA.HCVLIST.ORG** կայքում

Լոս Անջելես քաղաքի բնակարանային ապահովման մարմինն անհատներից և ընտանիքներից ընդունում է առցանց դիմումներ՝ 8-րդ բաժնի ծրագրի սպասման ցուցակում ներառվելու վիճակահանությանը մասնակցելու համար: 8-րդ բաժնի ծրագիրը ընտանիքներին առաջարկում է բնակարանային նպաստներ՝ անշարժ գույքի սեփականատերերին վճարելով իրենց վարձավճարի մի մասը: Դիմելու հնարավորություն ունի ցանկացած ընտանիք կամ անհատ, ում եկամուտը չի գերազանցում սահմանված չափը: Ընտանիքի անդամներից մեկը պետք է լինի օրինական բնակիչ, նույնիսկ եթե նա անչափահաս երեխա է: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **HACLA.ORG**:

Ընտանիքները և անհատները կարող են դիմել առցանց դիմումների ընդունման երկու շաբաթների ընթացքում, օրական 24 ժամ, շաբաթական յոթ օր՝ ինտերնետ հասանելիությամբ սմարթֆոնի, համակարգչի կամ այլ շարժական սարքի միջոցով: Դիմումները չեն կարող ընդունվել անձամբ, Էլ. փոստով կամ փոստով: Սմարթֆոն կամ ինտերնետ հասանելիությամբ համակարգիչ կամ այլ սարք չունեցող անձանց համար Լոս Անջելես քաղաքի լոկալ գրադարաններում առաջարկվում է համակարգիչների և ինտերնետ կապի անվճար հասանելիություն:

Վիճակահանությանը դիմելու համար Ձեզ անհրաժեշտ են հետևյալ տեղեկությունները՝ վավեր Էլ. հասցե, հեռախոսահամար, Ձեր բնակության հասցեն (եթե առկա է) և փոստային հասցեն, որոնց միջոցով Ձեզ հետ հնարավոր է կապ հաստատել, ընտանիքի ընդհանուր տարեկան եկամուտը, ինչպես նաև Տան տիրոջ և նրա կնոջ/ամուսնու/համատիրոջ (եթե կիրառելի է) անուն, ազգանունը, ծննդյան ամսաթիվը և Սոցիալական ապահովության համարը/Օտարերկրյա քաղաքացու գրանցման համարը (առկայության դեպքում):

Լրացուցիչ ռեսուրսներ, ինչպիսիք են, օրինակ, դիմելու համար օգնություն ցուցաբերող գործընկերները, Էլ. փոստի հաշվի ստեղծման դասընթացները և համակարգիչների ու ինտերնետի անվճար հասանելիությունը, կարող եք գտնել **HACLA.HCVLIST.ORG** կայքում: Եթե հաշմանդամության պատճառով դիմում լրացնելու կամ Էլ. փոստի հաշիվ ստեղծելու հետ կապված օգնության կարիք ունեք, կամ եթե Ձեզ հարկավոր են թարգմանչի ծառայություններ կամ հաղորդակցության այլ ձևաչափ, խնդրում ենք զանգել **213-523-SEC8** կամ **877-621-SEC8** հեռախոսահամարներով, խաղաղօվկիանոսային ժամային գոտիով առավոտյան 7-ից մինչև երեկոյան 6-ը, ամեն օր, դիմումների ընդունման ողջ ժամանակահատվածում: Լսողության կամ խոսելու հետ խնդիրներ ունեցող և TDD կամ TTY տեխնոլոգիայից օգտվող անհատները կարող են զանգել Կալիֆորնիայի կոմունացվող հաղորդագրությունների ծառայություն՝ հավաքելով **7-1-1** և ստանալ օգնություն:

Դիմումների ներկայացման ժամանակահատվածի ավարտից հետո տեղի է ունենում պատահական վիճակահանություն, որի միջոցով ընտրվում են 30 000 դիմումներ՝ «8-րդ բաժին» ծրագրի Սպասման ցուցակում ներառվելու համար: Դիմումները կարող են ներկայացվել ցանկացած պահի՝ դիմումների ընդունման երկշաբաթյա ժամանակահատվածի ողջ ընթացքում:

Վիճակահանության ժամանակ նախապատվություն կտրվի այն դիմորդներին, ովքեր բնակվում, աշխատում են կամ աշխատանքի են ընդունվել Լոս Անջելես քաղաքում, ինչպես նաև այն դիմորդներին, ովքեր (կամ որոնց ընտանիքի անդամները) հանդիսանում են ԱՄՆ զինված ուժերի վետերաններ և զորացրման ժամանակ իրավունքներից և արտոնություններից չեն զրկվել:

Մինչ 2022 թ. դեկտեմբերի 1-ը դիմորդները Էլ. փոստով կծանուցվեն վիճակահանությամբ ընտրված լինելու կամ չլինելու իրենց կարգավիճակի մասին: Դիմորդները կարող են ստուգել իրենց կարգավիճակը նաև **HACLA.HCVLIST.ORG** կայք այցելելու և/կամ **213-523-SEC8** հեռախոսահամարով զանգելու միջոցով:

Դիմելու և լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք այցելել **HACLA.HCVLIST.ORG**:

